ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋԻԼԻԶԱՅԻ

ՄՈՒՐԱԴ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ



# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**2024-2029**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ.

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.

4.ՍԱՀՄԱՆՎԱԾՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ.

5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ.

6. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

7. ՌԻՍԿԵՐԸ


**Նախաբան**

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականությունը ամրագրված է օրենքով, որով և Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք: Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Կրթության դերն ու նշանակությունը զգալիորեն աճում է. Սերունդների առջև կայացած մարտահրավերները ստիպում են վերագնահատել արժեքներն ու հասարակության մեջ մարդու դերը՝ զարգացնելով ապրումակցման, հանդուրժողականության և արժեքային որակներ:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը սահմանում է 2024-2029 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ համապատասխան արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին, հաշվի է առնված կրթական հաստատության ունեցած մարդկային ներուժն ու  նյութական կարիքները, որոնք անհրաժեշտ են հասնելու դպրոցի սահմանած առաքելությանն ու նպատակների իրականացմանը:Այն ընդգծում է դպրոցի առանցքային դերը համայնքում և հեռավոր շրջաններում նման կրթական հաստատությունների պահպանման և աջակցության կարևորությունը: Ինչպես նաև հիմնավորում դպրոցի կարևոր դերը հեռավոր այս շրջանի երեխաներին կրթություն ապահովելու գործում:

**Դպրոցի գործունեությունը**

**Հայ-վրացական սահմանամերձ գոտում գտնվող հեռավոր Ջիլիզա համայնքի դպրոցը առանցքային դեր է խաղում նրա բնակիչների կյանքում: Այլ բնակավայրերից մեկուսացված գյուղ լինելու փաստը վկայում է ուսումնական հաստատության կարևորության մասին և դրա ներկայությունը երաշխավորում է, որ երեխաներին հասանելի կլինի որակյալ կրթություն: Այս հասանելիությունը վճռորոշ է գյուղի երիտասարդության կրթական հնարավորությունների և ապագա հեռանկարների պահպանման համար: Դպրոցը գործում է համապատասխան պետական կրթական քաղաքականությանը, համայնքի, շահառու խմբերի  կարիքներին և հնարավորություններին՝ անկախ այն հանգամանքից, որ գտնվում է անմիջապես սահմանին և հանդիսանում է ամենահեռավոր համայնքը Լոռու մարզկենտրոնից:**

Մեր դպրոցը առաջնորդվելով հայրենասիրության և մարդասիրության սկզբունքներով, ջանում է ապագա սերունդներին դարձնել պատասխանատու քաղաքացի, միջավայր՝ սովորողների համար մատչելի, որակյալ, ժամանակակից պահանջներին համահունչ ներառական և մասնակցային միջավայր, արդյունավետ կրթության ապահովման, նրանց՝

որպես արժանապատիվ քաղաքացու ձևավորման, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշման համար, հեռահար նպատակ ունենալով սովորողի մոտ ձևավորել անհրաժեշտ կարողություններ, որոնք կհանդիսանան հիմք՝ հասուն կյանք մտնելու ճանապարհին:

Դպրոցի կրթության որակի շարունակական բարձրացումը հնարավորություն է տալիս ապահովել ստեղծագործական աշխատանքի զարգացումը, աշակերտների վերլուծական, այդ թվում՝ քննադատական մտածողությունը, կիրառել տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաներ: Աշխատանքներ են տարվումբարձրացնելու համար կրթության նկատմամբ աշակերտների հետաքրքրությունը, այդ թվում՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ՝ դրանով իսկ բարձրացնելով նրանց մոտիվացիան, զարգացնելով անհատականության ուղղվածությամբ կրթությունը, աշակերտներին ներգրավելով բոլոր գործընթացներում, ապահովելով հնարավորինս մասնակցային քաղաքականություն:

Աշակերտների և ուսուցիչների ակտիվ մասնակցությունը դպրոցի առօրյային, կրթության կազմակերպման գործընթացին՝ սահմանված է որպես կարևոր նպատակ, որին հասնելու համար պահանջվում է ակտիվ համագործակցություն շահագրգիռ անձանց և կազմակերպությունների հետ, զարգացնելով կրթության որակը և սովորողների աշխարհայացքը:

Շարունակական աշխատանքներ են տարվելու զարգացնելու համար համագործակցությունը պետական, տեղական ինքնակառավարման և հասարակական կառույցների հետ, իրականացնելով համատեղ քննարկումներ և միջոցառումներ, երկխոսության միջոցով առավել արդյունավետ գործընկերություն կառուցել, մասնակիցը դարձնել դպրոցի գործունեությանը:

Ջիլիզայի Մուրադ Մուրադյանի անվան դպրոցը(Այսուհետ՝ Դպրոց) գտնվում է վարչական շենքում, որը կառուցվել է 1987 թվականին: Դպրոցի գործունեությունը ունի ռազմավարական և կենսական կարևորություն:

Դպրոցը իր ունեցած ներկայիս հնարավորություններով, նյութատեխնիկական բազայով, մարդկային ռեսուրսներով և ֆինանսական հնարավորություններով ապահովում է կրթական որոշակի կարիքները: Սակայն դրանք բավարար չեն երեխաներին համար կրթական լիարժեք գործընթաց ապահովելու համար, ամբողջ ուշադրությունը ուղղված է նոր հնարավորությունների ստեղծմանը, երեխաների համար նպաստավոր կրթական միջավայրի ապահովմանը:

Համաձայն լիցենզիայի իրականացվում է տարրական, հիմնական, միջնակարգ հանրակրթական հիմնական ծրագրեր:




Դպրոցը ներկատեղակայմամբ գործում է  1998 թվականից:  Երկհարկանի շենք է, մուտքը թեքահարթակով, ջեռուցվում է էլեկտրաէներգիայով, առկա է ինտերնետ կապ, ունի մեկ սենյակ ուսուցչանոցի համար և մեկ առանձնասենյակ:

## 1. ԻՐԱՎԻՃԱԿԻՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂԵՎԹՈՒՅԼԿՈՂՄԵՐԸ.

Այս բաժնում ներկայացված է դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև հնարավորությունները: Ներկայացված են այն մարտահրավերները, որոնք առկա են և խոչընդոտ են դպրոցի՝ ժամանակակից չափանիշներին համապատասխան առավել որակյալ կրթություն ապահովելու գործում:

Այսպիսով, դպրոցի ամենաակնառու խնդիրը ժամանակակից կրթական չափորոշիչներին համապատասխանող դպրոցական շենքի բացակայությունն է: Դպրոցը գործում է համայնքի վարչական շենքում, հնացած ենթակառուցվածքը խոչընդոտում է դպրոցի կարողությանը՝ պատշաճ կերպով տեղավորել հետզհետե ընդլայնվող աշակերտական կազմը:

Հինգ դասասենյակ լինելու պատճառով ուսուցիչների մեծ մասը ապահովված չէ անհրաժեշտ ուսումնական ծանրաբեռնվածությամբ: Ռեսուրսների բաշխման այս անարդյունավետությունը հանգեցնում է անձնակազմի թափուր պաշտոնների, որոնք մնում են չզբաղեցված, ինչը բացասաբար է անդրադառնում աշակերտներին մատուցվող կրթության որակի վրա: Դպրոցը բախվում է հիմնական գործառույթների համար հատկացված տարածքների խիստ պակասի: Օրինակ, ուսուցչի աշխատասենյակը ներկայումս ծառայում է որպես ժամանակավոր գրադարան և համակարգչային սենյակ՝ խոչընդոտելով ուսուցիչների դասերին պատրաստվելու և արդյունավետ հետազոտություն անցկացնելու կարողությանը, տնօրենի աշխատասենյակը գործում է որպես դասագրքերի պահեստարան՝ առաջացնելով վարչական անարդյունավետություն:

Այսօրվա թվային դարաշրջանում կրթական նպատակներով մեծ է հուսալի ինտերնետ կապի կարևորությունը: Կայուն ինտերնետ կապի բացակայությունը խոչընդոտել է դպրոցի՝

հեռավար ուսուցումը կազմակերպելու և տեխնոլոգիան արդյունավետ կերպով իր ուսումնական ծրագրում ներառելու կարողությանը:

Մեկ այլ կարևոր խնդիր է դպրոցի տարածքում բժշկական կենտրոնի բացակայությունը, որը վտանգում է աշակերտների և անձնակազմի առողջությունն ու անվտանգությունը արտակարգ իրավիճակների կամ առողջական փոքրխնդիրներիդեպքում:

Դպրոցին անհրաժեշտ է առանձին տարածքներ գրադարանի, համակարգչային սենյակի և ադմինիստրատիվ առաջադրանքների համար, որպեսզի ապահովվի համապատասխան հարմարություններ ուսուցիչների և տնօրենի համար՝ իրենց պարտականություններն արդյունավետ իրականացնելու նպատակով:

Անհրաժեշտություն է դպրոցիանխափան և գերարագ և անսահմանափակ ինտերնետային կապովապահովումը, հնարավորություն տալով և՛ աշակերտներին և՛ ուսուցիչներին մուտք գործել առցանց հարթակներ, օգտվել ռեսուրսներից և անխոչընդոտ մասնակցել հեռավար ուսուցման աշխատանքներին:

Հիմնվելով առարկայական փորձաքննության և աշակերտների կարիքների վրա, զուգահեռ աշխատանքներ են տարվելու նոր դասասենյակներ կառուցելու համար: Բացի այդ, ջանքեր կգործադրվեն թափուր պաշտոնները զբաղեցնելու համար որակյալ ուսուցիչներիհամալրման նպատակով:

Կարևոր է բժշկական կետ ստեղծելու կամ տեղական առողջապահականհաստատության հետ համագործակցությունը՝ աշակերտներին ևանձնակազմին առաջին բժշկական օգնության տրամադրման համար:

Այսպիսով, դպրոցը բախվում է որոշակի մարտահրավերների, որոնց լուծման համար դպրոցն իրականացնում է ամենօրյա աշխատանք՝ ժամանակակից չափանիշներին համապատասխան բարձրորակ կրթության համար բարենպաստ ուսումնական միջավայր ապահովելու և ուսուցիչների մասնագիտական զարգացում ապահովելու համար:

*Դպրոցի ղեկավարության, տեղական իշխանությունների և համայնքի համար հրամայական է համագործակցել՝ գտնելու և իրականացնելու կայուն լուծումներ՝ հաղթահարելու այդ խոչընդոտները և բարձրացնելու կրթական մակարդակը, իսկ առաջնահերթությունըպետք է լինի ժամանակակից, լավ կահավորված շենքի կառուցումը, որը կապահովի բարենպաստ միջավայր ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցչական անձնակազմի համար:*

*Զարգացման ծրագրի շրջանակներում պլանավորված գործողությունները ևս մեկ քայլ կլինեն՝ հասնելու համար համայնքում դպրոց սեփական շենքի կառուցմանը և առավել նպաստավոր պայմաններում երեխաների կրթության կազմակերպմանը:*

**Ընդհանուր տեղեկություններ**

2003թ. հունվարի 24-ին գրանցվել է Հայաստանի Հանրապետության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Թումանյանի տարածքային բաժնում/ գրանցման համար 96.210.00662, վկայականի թիվ 03Ա 058555, գտնվելու վայրը՝գ. Ջիլիզա, փ.1, շենք 12: Դպրոցի կանոնադրության մեջ փոփոխություններ է գրանցվել 2011թ. նոյեմբերի 22-ին ,, ՀՀ Լոռու մարզի Ջիլիզայի միջնակարգ դպրոց,, բառերը փոխարինել ,,ՀՀ Լոռու մարզի Ջիլիզայի Մուրադ Մուրադյանի անվան դպրոց,, բառերով: Կանոնադրության փոփոխություններ են կատարվել նաև 2017թ. սեպտեմբերի 8-ին,2020թ. հոկտեմբերին 19-ին, 2020թ. հունվարի 30-ին, 2022թ. հուլիսի 21-ին:

**Դպրոցի անվանումն է՝**

- Հայերեն՝ լրիվ՝,,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջիլիզայի Մուրադ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց,, պետական ոչ առևտրային կազմակերպություն
- .հայերեն՝ կրճատ՝ ,,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջիլիզայի Մուրադ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց,, ՊՈԱԿ
- ռուսերեն՝ լրիվ՝ ,,Джилизская средняя школа имени Мурада Мурадяна Лорийской области Республики Армепния ,,государственная орнганизация
- ռուսերեն կրճատ՝,,Джилизская средняя школа имени Мурада Мурадяна Лорийской области РА''' ' ГНКО
- անգլերեն՝ երկար՝ '' Jiliza Secondary School after Murad Muradyan, Lori Region
- Republic of Armenia,, State Non Profit Organization
- անգլերեն՝ կրճատ՝Jiliza Secondary School after Murad Muradyan, Lori Region,
- RA,, SNPO
- Ծրագրի անվանումը՝ միջնակարգ հանրակրթական
- Հաստատության տեսակը՝ միջնակարգ հանրակրթական դպրոց
- Իրականացվող ծրագրերի աստիճանը՝
- տարրական-11 տեղ
- հիմնական-12 տեղ
- միջնակարգ-11 տեղ
- ՀՎՀՀ՝ 06604097
- Հ/Հ՝900260000172
- Սպասարկող բանկ՝ աշխատակցի ընտրությամբ
- Դպրոցի շենքը՝ հարմարեցված
- Հասցեն՝ՀՀ Լոռու մարզ, գ. Ջիլիզա, փ.1, շ.12
- Վեբ կայքը՝ jilizaschoolsite.am
- Էլ. Փոստ՝ jilizaschool@yandex.ru
- Աշխատողներ- 15, մանկավարժներ՝9, 1 հավաքարար, 3 պահակ, քաղիրավական պայմանագրով աշխատողներ՝1 խոհարար, 1 հաշվապահ
- Կազմակերպա-իրավական տեսակը՝ ՊՈԱԿ

- Իրավաբանական տեսակը՝ Ոչ առևտրային
- Համաձայն լիցենզիայի իրականացնում է տարրական, հիմնական,
- միջնակարգ հանրակրթական հիմնական ծրագրեր
- Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը-1998
- Հարկայնությունը՝ երկհարկանի
- Թեքահարթակ՝1
- .Ջեռուցման եղանակը՝ էլեկտրաէներգիա
- Աշխատասենյակների թիվը՝1
- ՈՒսուցչանոց՝ 1
- Ինտերնետ կապի առկայությունը՝- առկա է
- Դասարանների թիվ՝5
- Աշակերտների թիվ՝ 14

## Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների( դահլիճ, լաբորատորիա, արհեստանոց, առարկայական կաբինետ, ճաշարան, բուժկետևայլն) հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

Դպրոցն ունի դասասենյակներ, ուսուցչանոց, ճաշարան, որոշակի նյութատեխնիկական միջոցներ, որոնք բավարարում են որակյալ կրթության կազմակերպման համար մինիմալ պահանջները: Նույն շենքում է գտնվող ակումբը, որտեղ է գտնվում թենիսի սեղանը, ինչից տաք եղանակին օգտվում են երեխաները ֆիզկուլտուրայի ժամին, շենքում է գտնվում նաև համայնքի գրադարանը, որից օգտվում են նաև երեխաները, իսկ դպրոցական միջոցառումները նույնպես անց են կացվում այդտեղ:Նույն շենքում է գտնվում նաև գյուղի բուժկետը, որից անհրաժեշտության դեպքում օգտվում է նաև դպրոցը Դպրոցն ապահովված է մշտական ջրով, ինչը հնարավորություն է տալիս պահպանել դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանները:Դպրոցը ունի մշակված տարհանման պլան, Դասարանները լուսավոր են, առկա է վերանորոգված և կահավորված խոհանոց, ճաշարան, որտեղ ,,Կայուն դպրոցական սնունդ,, ծրագրով տաք սնունդ է ստանում տարրական դասարանի 3 աշակերտները:

Չնայած, որ Դպրոցում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք վերաբերում են հաստատության ենթակառուցվածքներին, այնուամենայնիվ, առկա մարդկային, մասնագիտական ներուժը ունի հնարավորություն առավել ընդլայնելու գործունեության շրջանակը, նպաստելու նոր միջոցների ներգրավմանը, առկա պայմաններում անխափան կրթական գործընթաց ապահովելու համար: Ինչպես արդեն նշվել է դպրոցում այս պահին սովորում են 14 աշակերտներ, և անձնակազմի ամբողջ ուշադրությունն ուղղված է նրանց համար նպաստավոր, հաստատված կրթական չափորոշիչներին համապատասխան կրթություն ապահովելուն:

***Գծապատկեր 1 Շենքային պայմաններ***

| h/h | Շինությունների և հարմարությունների անվանումը | Քանակը | Մակերեսը (մ/քառ) | Ծավալը(մ/խոր) | Այլ տեղեկություններ |
|---|---|---|---|---|---|
| 2 | Աշխատասենյակ | 1 | 8 | 44.24 | |
| 3 | Դասասենյակ | 5 | 55 | 139.15 | |
| 4 | ՈՒսուցչանոց | 1 | 25 | 63.25 | |
| 5 | Ճաշարան | 1 | 25 | 63.25 | |
| 6 | Զուգարան | 2 | 17.2 | | |
| 15 | Հեռախոսներ | 1 | - | - | 094516977 |
| 16 | Ջեռուցվող տարածքներ | - | | | - |
| 17 | Ջեռուցման տեսակը | - | - | - | էլեկտրաէներգիա |
| 18 | Ջեռուցման օրերը | - | - | - | |
| 21 | Շենքերի ներսի մաքրվող մակերես | | 200 | | |
| 22 | Շենքերիդրսիմաքրվողմակերես | - | 600 | - | |

***Գծապատկեր 2 Նյութատեխնիկական բազա***

| **Գույքի անվանումը** | **Քանակը** | **Միավորը** | **Լրացուցիչ** |
|---|---|---|---|
| Համակարգիչ | 5 | հատ | օգտագործվող |
| Բազմաֆունկցիոնալ տպիչ | 2 | հատ | օգտագործվող |
| Տպիչ | 1 | հատ | օգտագործվող |
| Լազերային տպիչ | 1 | հատ | օգտագործվող |
| Պատճենահանող սարք | 1 | հատ | օգտագործվող |
| Մոնիտոր | 1 | հատ | օգտագործվող |
| Պրոյեկտոր | 1 | հատ | օգտագործվող |
| Տեսախցիկ | 1 | հատ | օգտագործվող |
| Եռոտանի վեբ տեսախցիկի համար | 1 | հատ | օգտագործվող |
| Հեռուստացույց | 1 | հատ | օգտագործվող |
| Դինամիկ | 1 | հատ | օգտագործվող |
| Միկրոֆոն | 1 | հատ | օգտագործվող |
| Բարձրախոս | 1 | հատ | օգտագործվող |
| Սառնարան | 2 | հատ | օգտագործվող |
| Ուսուցչի սեղան | 6 | հատ | օգտագործվող |
| ՈՒսուցչի գրասեղան | 10 | հատ | օգտագործվող |
| Աշակերտական սեղան-աթոռ/փոքր/ | 10/20 | հատ | օգտագործվող |
| Աշակերտական սեղան –աթոռ/միջին/ | 15/30 | հատ | օգտագործվող |
| Աշակերտական սեղան-աթոռ/ մեծ/ | 15/30 | հատ | օգտագործվող |
| Էլ. տաքացուցիչ | 12 | հատ | օգտագործվող |
| Բլենդեռ | 1 | հատ | օգտագործվող |
| Հարիչ | 1 | հատ | օգտագործվող |

| | | | |
|---|---|---|---|
| Մանկ. զգեստապահարան | 1 | հատ | օգտագործվող |
| անխափան սնուցման սարք | 1 | հատ | օգտագործվող |
| Էլ. վառարան | 1 | հատ | օգտագործվող |
| Սալօջախ էլ., 4 աչք | 1 | հատ | օգտագործվող |
| Գրատախտակ | 12 | հատ | օգտագործվող |
| անխափան սնուցման սարք | 1 | հատ | պիտանի չէ |
| Համակարգիչ | 1 | հատ | պիտանի չէ |
| Տեսախցիկ | 1 | հատ | պիտանի չէ |
| | | | |

**Դպրոցի մարդկային ռեսուրսները**

**Դպրոցի հաստիքների ձևավորման հիմքը հանդիսացել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.12.2022թ. N79-Ն հրամանը:**

**Դպրոցը չունի տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, գնումների համակարգող, էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ, հոգեբան, ուսուցչի օգնական, ԴԱԿ, ազգպան:**

**Դպրոցի տնօրենի պարտականությունների կատարումը դրված է տնօրենի տեղակալի վրա, դպրոցում առկա են թափուր հաստիքներ, որոնց համալրելու դեպքում էլ ավելի կբարձրանա կրթության որակը:**

**Գծապատկեր - Դպրոցի մարդկային ռեսուրսները**

| | Պաշտոնը | Դրույքաչափը | Աշխատողները |
|---|---|---|---|
| | 1 | 2 | |
| 1 | **Տնօրեն** | **1** | - |
| 2 | **Վարչատնտեսական մասի համակարգող** | **1** | - |
| 3 | **Տնօրենի տեղակալ** | **0.5** | **1** |
| 4 | **Հաշվապահ** | **0.5** | **1** |
| 5 | **Գնումների համակարգող** | **0.5** | - |
| 6 | **Գրադարանավար** | **0.5** | **1** |
| 7 | **Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ** | **0.5** | - |
| 8 | **Հոգեբան** | **0.5** | - |
| 9 | **Նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործ. Ուսուցիչ/Չինղեկ/** | **0.5** | **1** |

| | | | |
|---|---|---|---|
| 10 | **Ուսուցչի օգնական** | **0.5** | - |
| 11 | **Ուսուցիչներ** | | **9** |
| 12 | **Այգեպան** | **0.5** | - |
| 13 | **Հավաքարար** | **1** | **1** |
| 14 | Պահակ | 3 | 3 |
| 15 | ԴԱԿ | 0.5 | _ |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ |
|---|---|
| **ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ/ԳԾԱՊԱՏԿԵՐ 1/** | |
| ✓ Ունի վերանորոգված դասասենյակներ, ճաշարան սանհանգույցներ<br>✓ Առկա են եվրոպատուհաններ, ջեռուցվում է հոսանքով, ապահովվում է ջերմային ռեժիմը:<br>✓ Նույն շենքում է գտնվող ակումբը, որտեղ է գտնվում թենիսի սեղանը, ինչից տաք եղանակին օգտվում են երեխաները ֆիզկուլտուրայի ժամին<br>✓ Նույն շենքում է գտնվում նաև համայնքի գրադարանը, որից օգտվում են նաև երեխաները, իսկ դպրոցական միջոցառումները նույնպես անց են կացվում այդտեղ<br>✓ Նույն շենքում է գտնվում նաև գյուղի բուժկետը, որից անհրաժեշտության դեպքում օգտվու է նաև դպրոցը<br>✓ Մշտական ջրով ապահովվածություն, ինչը հնարավորություն է տալիս պահպանել դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանները<br>✓ Դպրոցը ունի մշակված տարհանման պլան, որոնք փակցված են միջանցքում<br>✓ Դասարանները լուսավոր են<br>✓ Դպրոցում առկա է վերանորոգված և կահավորված խոհանոց, | ✓ Դպրոցը գտնվում է վարչական շենքում<br>✓ չունի որոշ առարկաների համար՝ ռազմագիտության, համակարգչային դասասենյակներ, լաբորատորիաներ, մարզադահլիճ:<br>✓ Դասասենյակների և միջանցքների մակերեսները փոքր են օրենքով սահմանված չափերից:<br>✓ Դպրոցը ներքին տարածքը հարմարեցված չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց<br>✓ Միջանցքը ունի կոսմետիկ նորոգման կարիք<br><br>✓ Ուսուցչանոցը ծառայում էորպես փոխտնօրենի աշխատասենյակ, համակարգչային դասասենյակ, որտեղ անց են կացվում ինֆորմատիկա առարկայի դասերը<br>✓ Տնօրենի աշխատասենյակը ծառայում է նաև որպես գեղարվեստական գրքերի և դասագրքերի պահման վայր<br>✓ Ազատ դասարանի բացակայությունը, ինչը խոչընդոտ է կիսվող ժամերի առկայության դեպքում<br>✓ Դպրոցը չունի ապաստարան, նկուղ և որպես ապաստարան ծառայում է դպրոցին կից գտնվող շենքի նկուղը և մոտակա |

| | |
|---|---|
| ճաշարան, որտեղ ,,Կայուն դպրոցական սնունդ,, ծրագրով տաք սնունդ է ստանում տարրական դասարանի 3 աշակերտները: | ձորակը<br>✓ Սանհանգույցները հարմարեցված չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումների<br>✓ Նույն շենքում է գտնվում գյուղապետարանը, ակումբը, գրադարանը, բուժկետը, նախակրթարանը,<br>✓ Առարկայական դասասենյակների բացակայություն<br>✓ Դպրոցի հեռավորություն, որը թույլ չի տալիս սնունդ մատակարարող ընկերությանը սնունդը դպրոց հասցնել /կազմակերպում է տնօրենը/ |
| **ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ** | |
| ✓ Դպրոցը ունի նվազագույն նյութատեխնիկական բազա (գծապատկեր 2)<br>✓ Խոհանոցում առկա է գազօջախ, սառնարան, ջրատաքացուցիչ, լվացարան, մետաղյա դարակաշարեր<br>✓ Դպրոցում առկա է սննդի պահեստ, որը նույնպես վերանորոգված է | ✓ Լաբորատոր սարքավորումների բացակայություն<br>✓ Մարզագույքի բացակայություն<br>✓ Նոր համակարգիչների բացակայություն<br>✓ Ճաշարանում համապատասխան սեղան-աթոռների բացակայություն/օգտագործվում է սովորական սեղան-աթոռներ/<br>✓ Այլընտրանքային ինտերնետ կապի բացակայություն<br>✓ Բացակայում է արտակարգ իրավիճակների մանուալ ազդարարման համակարգը<br>✓ Չկա հակահրդեհային անվտանգության համակարգ: |

Որպես առավել զգայուն նպատակ, սահմանված է Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի համապատասխանեցումը առկա կարիքներին և որի ապահովման համար առանձնացվել են հնարավոր ռիսկերը և սահմանվել դրանց նվազմանն ուղղված գործողությունները:

| ՌԻՍԿԵՐ | ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|

| | |
|---|---|
| Ֆինանսական անբավարար միջոցներ կամ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելու սահմանափակումը<br><br>Տարբեր կազմակերպությունների ու գերատեսչությունների անտարբերություն | • Կառավարման խորհրդի հետ համատեղ մշակել ֆինանսական կայունության ապահովման պլան, որը թույլ կտա հետևողականորեն աշխատանքներ տանել ինչպես ստացվող պետական միջոցների ծախսերի արդյունավետ օգտագործման համար, այնպես էլ կենթադրի պլանավորված գործողությունների և աշխատանքների համալիր միջոցառումների իրականացում, որը թույլ կտա ներգրավել լրացուցիչ միջոցներ նաև այլ աղբյուրներից:<br>• Ամենօրյա հաշվետու և թափանցիկ աշխատանքների իրականացում ՝ Դպրոցի հեղինակության բարձրացման համար: |

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները համագործակցում են միմյանց հետ, դպրոցի կանոնադրության և Լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Այս մարմինները շահագրգիռ են դպրոցի զարգացման հարցում և օժանդակում են բոլոր նախագծերին: Դպրոցի կառավարման խորհուրդը լիազորությունների շրջանակում հրավիրում է նիստեր, քննարկում դպրոցի խնդիրները, տալիս առաջարկություններ: Մանկավարժական խորհուրդն իրականացնում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, քննարկում ընթացիկ հարցեր, ընդունում որոշումներ: Ակտիվ գործունեություն է ծավալում նաև դպրոցի աշակերտական խորհուրդը: Դպրոցի տնօրենությունը լիովին աջակցում և օգնում է սովորողներին՝ իրականացնելու նրանց նախաձեռնությունները: Ծնողական խորհուրդը ևս որպես կարևոր օղակ, մշտապես ներգրավված է դպրոցի աշխատանքներում:Հաստատությանկառավարումնիրականացվումէհամաձայն Կանոնադրության, կանոնավորգումարվումեն նիստեր՝ նպաստելովդպրոցի ուսումնադաստիրակչական և կառավարման գործընթացին: Չնայած վերը նշվածից, առկա են որոշակի խնդիրներ, մասնավորապես խորհրդի անդամների կողմից նկատվում են պասիվություն, բացակայություններ նիստերին: Տնօրենը՝ իր լիազորությունների շրջանակներում հարցեր է բարձրացնում, պարբերաբար հրավիրում նիստեր, սակայն որոշակի ֆինանսական ռեսուրսների բացակայության պարագայում խորհրդի անդամներից ոմանք չեն կարողանում մասնակցել: Բացի կանոնադրական նպատակներից կամ պահանջներից, դպրոցի այս 2 կարևոր օղակների համար կազմակերպվող տարաբնույթ միջոցառումների, իրազեկմանն ուղղված հանդիպումների քանակը բավականին ցածր է, առկա է իրականացվող պետական քաղաքականություններում իրականացվող փոփոխությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության փոխանակմանն ուղղված քննարկումների ոչ բավարար քանակ: Աշխատանքների կանոնավոր կազմակերպման համար անհրաժեշտ է մշակել աշխատակարգ,

որտեղ առավել մանրամասն կնկարագրվի Կառավարման մարմին և տնօրեն փոխգործակցության շրջանակը և ձևաչափը: Անհրաժեշտ է, որպես լրացուցիչ մեխանիզմ՝ ներդնել հեռավար նիստեր անցկացնելու գործիքը, որը թույլ կտա առավել փոքր ֆինանսական բեռով իրականացնել խորհրդի նիստերը, քննարկել առկա խնդիրներն ու լուծումներ առաջարկել: Խորհրդի անդամների մոտիվացիան բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել թիրախային միջոցառումներ, վերապատրաստումներ նաև անձնային կարողությունների բարձրացմանն ուղղված, ստեղծել նպաստավոր միջավայր նրանց մասնագիտական և անձնային որակների բարելավման համար, որոնք հնարավոր է իրականացնել փորձի փոխանակմանն ուղղված միջոցառումների, առցանց վերապատրաստումների, առցանց ռեսուրսներից օգտվելու հմտությունների բարձրացման և թիրախային այլ միջոցառումների իրականացման միջոցով:Անհրաժեշտ է նաև ամենամսյա ռեժիմով իրականացնել Կառավարման խորհրդի և տնօրենի միջև հաշվետվության կամ աշխատանքների կատարման վերաբերյալ տեղեկատվության փոխանցման հնարավորություն: Սա թույլ կտա Խորհրդին, առավել ներգրավված լինել և գիտակցել իրենց դերը կառավարման գործընթացում: Հաշվետվությունները կամ տեղեկատվության փոխանցումը հնարավոր է իրականացնել գրավոր՝ մշակված ձևաչափով.

Կառավարման խորհրդին ներկայացվող միջանկյալ հաշվետվության ձևաթուղթ

| հ/հ | Գործողություն | Պատասխանատու | Արդյունք | Մարտահրավերներ/ դժվարություններ |
|---|---|---|---|---|
| | | | | |

| ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ | |
|---|---|
| **ՈՒԺԵՂ ԿՈՂՄ** | **ԹՈՒՅԼ ԿՈՂՄ** |
| • Ունի կառավարման խորհուրդ, որն իրականացնում է իրեն վերապահված գործառույթները;<br>• Դպրոցի Կառավարման մարմիններն են<br>1. Հիմնադիր<br>2. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն<br>3. Կառավարման/միացյալ խորհուրդ, բաղկացած 19 անդամից/<br>4. Գործադիր մարմին/տնօրենը. այսուհետ նաև համակարգողը | ✓ Կառավարման խորհրդի նիստերին, զբաղվածությունից ելնելով, խորհրդի անդամների կողմից լինում են բացակայություններ<br>✓ Դպրոցական խորհուրդը լինելով չֆինանսավորվող կառույց ֆինանսական դժվարություններ է առաջացնում հատկապես ծնողների շրջանում, հաշվի առնելով դպրոցի հեռավորությունը միավորված |

| | |
|---|---|
| • Կառավարման խորհրդի նիստերը հրավիրվում են սահմանված ժամկետում և օրակարգով, անհրաժեշտությունից ելնելով հրավիրվում են նաև արտահերթ նիստեր<br>• Կառավարման խորհրդի անդամների և տնօրենների միջև ստեղծված է միմյանց օգնելու, բարոյահոգեբանական մթնոլորտ ապահովվող և հարգալից միջավայր:<br>• Դպրոցում ձևավորվել և գործում են նաև խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, որը բաղկացած է 9 անդամից և իրականացնում է իրեն վերապահված լիազորություններ՝ ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի հետ կապված և առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման հարցերը, հաստատության ներքին աշխատանքային կարգապահական և ուսումնառության ներքին կարգապահական կանոնները:<br>• **Աշակերտական խորհուրդ, որը բաղկացած է 10 աշակերտից,** սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որը, չնայած փոքրաթիվ լինելուն, հնարավորության սահմանում մասնակցում է դպրոցի, համայնքի հասարակական կյանքին՝ նպաստելով դպրոց-համայնք կապին, դառնում հեղինակ միջոցառումների:<br><br>✓ **Ծնողական խորհուրդ, որը բաղկացած է 7 անդամից և** որը նպաստում է կրթական գործունեության արդյունավետ կազմակերպմանը:<br>✓ Դպրոցում գործում է հետևյալ մեթոդմիավորումները՝Մաթեմատիկայի և բնական առարկաների մ/մ, Հումանիտար | դպրոցների խորհուրդներից/ ամենամոտ դպրոցը գտնվում է մոտ 32 կմ հեռավորության վրա/<br>✓ Դպրոցը չունի հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդ<br>✓ Իրավական ակտերի փոփոխություններին, իրենց լիազորություններին, իրավունքներին և պարտականություններին ոչ լիարժեք տիրապետելը<br><br>Աշակերտների ներգրավվածության պակաս դպրոցի կարգապահական կանոնների մշակմանը<br><br>✓ Ոչ բոլոր ծնողներն են պատրաստակամ մասնակցելու դպրոցի կրթական գործին<br>✓ 1 տարրական դասարան ունենալու պատճառով դպրոցում չի գործում տարրական մեթոդմիավորումը<br><br>✓ Դպրոցի մեթոդմիավորումները չեն համագործակցում այլ դպրոցների մեթոդմիավորումների |

| | |
|---|---|
| առարկաների և լեզուների մ/մ | հետ |

| ՌԻՍԿԵՐ | ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|
| • Համագործակցության պատրաստակամության բացակայություն<br>• Խորհուրդների մոտիվացիայի պակաս կամ բացակայություն | • Հանդիպումների, քննարկումների կազմակերպում<br>• Հետադարձ կապի ապահովում՝ խորհուրդներ –դպրոց<br>• Տարաբնույթ միջոցառումների իրականացում, երկխոսության հարթակների ձևավորում կազմակերպում<br>• Աշխատակազմի և խորհուրդների մոտիվացիան բարձրացնելու նպատակով ընթացակարգերի մշակում և խրախուսման մեթոդների կիրառում<br>• Կառավարման խորհրդի հեռավար եղանակով նիստերի անցկացում<br>• Փորձի փոխանակմանն ուղղված հանդիպումների կազմակերպում<br>• Կառավարման խորհրդի անդամների համար կոմպետեցիաների զարգացմանն ուղղված սեմինարների կազմակերպում |

## ՄԻԱՑՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ Լոռու մարզի Ջիլիզայի Մուրադ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ
ՀՀ Լոռու մարզի Շամլուղի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ
ՀՀ Լոռու մարզի Նեղոցի Արթուր Բեգջանյանի անվան հիմնական դպրոց ՊՈԱԿ

***Գծապատկեր 3***

| Դպրոց | Մանկ խորհրդի կողմից | Ծնողխորհրդի կողմից | Համայնքի կողմից | Մարզպետի կողմից | | Նախարարի կողմից |
|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ Լոռու մարզի Ջիլիզայի Մուրադ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց | Սարիբեկյան Լաուրա Վարդանյան Ռուզան | Հալիվորյան Անուշ Սարգսյան Հայարփի | Վարդանյան Միեր | Թամազյան Արկադի Վարդումյան Սասուն | | Ղարագոզյան Կամո Դուլգարյան Օլեգ |
| ՀՀ Լոռու մարզի Շամլուղի միջնակարգ դպրոց | Ավետյան Կարինե Մարգարյան Տաթևիկ | Գրիգորյա Արփինե Հովսեփյան Սյուզաննա | Աղաբաբյան Արթուր | | Թամազյան Արկադի Վարդումյան Սասուն | Դուլգարյան Օլեգ Ղարագոզյան Կամո |
| ՀՀ Լոռու մարզի Նեղոցի Արթուր Բեգջանյանի անվան հիմնական դպրոց | Ամիրյան Մարիամ Հախինյան Վրույր | ՈՒլուխանյան Արաքսի Բաբայան Մարգարիտ | Բաբայան Միեր | | Թամազյան Արկադի Վարդումյան Սասուն | Դուլգարյան Օլեգ Ղարագոզյան Կամո |

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցը հնարավորության սահմաններում համագործակցում է համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ, մասնակցում և աջակցում համայնքի կազմակերպած ազգային տարբեր տոնակատարությունների, հանդիպումների միջոցառումների, հիշատակի օրերի միջոցառումների անցկացմանը:

**/Գծապատկեր 4/**

| ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| **ՈՒԺԵՂ ԿՈՂՄ** | **ԹՈՒՅԼ ԿՈՂՄ** |
| *Դպրոցը.*<br><br>✓ ակտիվ մասնակցություն է ունենում համայնքային միջոցառումներին/ տոնական միջոցառումներ, շաբաթօրյակներ/<br>✓ համագործակցում է կրթության կառավարման մարմինների, ոլորտային կազմակերպությունների և կառույցների հետ.<br>✓ Դպրոց մանկավարժական անձնակազմը համագործակցում է ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումներին,<br>✓ ԿՏԱԿ-ի միջոցով իրականացնում է խորհրդատվություններ emis-ի հետ կապված<br>✓ անձնակազմն ու սովորողները ունեն բարձր ազգային գիտակցություն, համագործակցում են միմյանց հետ, մշտապես հոգում են դպրոցի բակում գտնվող Արցախյան առաջին պատերազմում զոհված Մուրադ Մուրադյանի հուշաղբյուրի մաքրությունը<br>✓ համագործակցում է Ոստիկանության Թումանյանի անչափահասների բաժնի հետ/ զրույց, դասախոսություն/<br>✓ համագործակցում է Ալավերդու համայնքապետարանի հետ<br>✓ համագործակցում է նաև Դասավանդիր Հայաստան կազմակերպության հետ՝ ուսուցիչների թափուր հաստիքները համալրելու համար<br>✓ Առկա է համագործակցություն ծնողների հետ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում | ✓ Դպրոցը գտնվելով համայնքային ենթակայության տակ գտնվող վարչական շենքում և չունենալով սեփական տարածք, օգտվում է համայնքի ակումբից հատկապես ֆիզկուլտուրայի ժամին, որտեղ տեղադրված է թենիսի սեղանը,<br>✓ Չկա համագործակցության ինստիտուցիոնալ հիմք, իրականացվում է տարերային, բարի կամքի դրսևորմամբ<br>✓ Չունի սեփական գրադարան օգտվում են համայնքի գրադարանից,<br>✓ Ցածր է տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության մակարդակը<br>✓ Ցածր է այլ մարզերի դպրոցների հետ և հասարակական կառույցների հետ համագործակցության մակարդակը |

| ՌԻՍԿԵՐ | ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|
| • Համագործակցության պատրաստակամության | • Դպրոցի կողմից պարբերաբար հաշվետվությունների ներկայացում՝ ինչը |

| | |
|---|---|
| բացակայություն<br>• Վերապատրաստման ծրագրերի հասանելիության ցածր մակարդակ | կբարձրացնի նրա նկատմամբ վստահությունը և հեղինակությունը<br>• Օգտագործել առկա կապերը, առավել ամրացնելու համագործակցությունն ու շրջանակը:<br>• Թիրախային միջոցառումների իրականացում: |

**Գծապատկեր 4**




| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ | |
|---|---|
| **ՈՒԺԵՂ ԿՈՂՄ** | **ԹՈՒՅԼ ԿՈՂՄ** |

| | |
|---|---|
| • Հաստատությունն ունի որոշակի քանակով դասագրքեր և այլ ուսումնական գրականություն սարքավորումներով<br>• դպրոցի բակում է գտնվող Արցախյան առաջին պատերազմում զոհված Մուրադ Մուրադյանի հուշաղբյուրը<br>• դպրոցը որդեգրել է ազգային գաղափարախոսության հենքի վրա ուսուցման կազմակերպումը<br>• ինքնազարգացման և հասարակական գործունեության դրսևորումները միշտ ընթացքի մեջ են<br>• պաշտպանվում է երեխաների կրթության իրավունքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքները և առանձնահատկությունները:<br>• պետական չափորոշչին համապատասխան՝ մշակվում են դասապլաններ և իրականացվում թեմատիկ ծրագրեր<br>• բարոյահոգեբանական մթնոլորտը դրական է և պատրաստ է ընդունել և աշխատել հաշմանդամություն ունեցող անձանց հետ | • Դպրոցը չունի նորագույն նյութատեխնիկական բազայով զինված առարկայական դասարաններ<br>• Առկա չեն աուդիո-դասարաններ<br>• էլեկտրոնային գրատախտակ և պրոյեկտոր բացակայություն<br>• Գրադարանի և ընթերցասրահի բացակայություն<br>• Բարեկարգ մարզահրապարակի բացակայություն<br>• Բացակայում է հատուկ հարմարեցումներն ու պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց համար, չնայած, որ այս պահին համայնքում չկա հաշմանդամություն ունեցող անձ, որը ունի կրթության կարիք կամ մանկավարժական թիմը համալրող անձ, սակայն դպրոցը պարտավոր է ապահովել նպաստավոր միջավայր: |

| ՌԻՍԿԵՐ | ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|
| • Առկա տեխնիկական միջոցների անհամապատասխանություն արագ փոփոխվող տեխնիկական դարում<br>• Սահմանված ժամկետներում դասագրքերի բացակայություն կամ ուշացում<br>• Աշակերտների թվաքանակի ավելացման պայմաններում հնարավոր են որոշակի նյութերի և տեխնիկական միջոցների պակասի ռիսկ<br>• Հաշմանդամություն ունեցող երեխաների համար դպրոցի ներքին միջավայրի բացակայություն, եթե լինի հատուկ կարիքներ ունեցող երեխա, ով պետք հաճախի դպրոց | • Աշխատանքներ իրականացնել դպրոցի նյութատեխնիկական բազան համալրելու ուղղությամբ, նախատեսված է տեխնիկական միջոցների համալրում<br>• Ներառական կրթության լիարժեք կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ապահովման ուղղված աշխատանքների իրականացում, ինչը ենթադրում է նոր միջոցների ներգրավում և հարմարեցումների ապահովում: Նման իրավիճակում Դպրոցը կվերանայի բյուջեն և որոշակի միջոցներ կուղղի նպատակային հարմարեցումների ստեղծմանն ու երեխայի համար կրթական իրավունքի ապահովմանը |

| | |
|---|---|
| | |

## ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՇԱՐԺԸ

**Դպրոցի գերազանցիկներ**




| 2019-2020 ուս. տարի | 2020-2021 ուս. տարի |
|---|---|
| Ալլա Վերանյան | Անահիտ Խուդինյան |
| Հասմիկ Կիրակոսյան | |

Հաշվետու ժամանակաշրջանում դպրոցի սովորողների թիվը տարեցտարի աճել է՝ 12-ից 20, այնուհետև բնակավայրի փոփոխության պատճառով նվազել է և հասել մինչև 14 աշակերտի:

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ

Ինչպես արդեն նշվել է, դպրոցն ունի 9 հաստիք մանկավարժական կադրերի համար: Մանկավարժները պարբերաբար մասնակցում են տարբնույթ մասնագիտական վերապատրաստումների՝ ինչպես ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպված, այնպես էլ գործընկեր կառույցների: Պարտադիր ատեստավորում են անցել դպրոցի ուսուցիչներից 5-ը: Նրանցից 7-ը ունեն 15 և ավել տարիների մասնագիտական աշխատանքային փորձ, 2-ը՝ 1-5 տարվա, բոլորն ունեն բարձրագույն կրթություն: Ուսուցիչները բոլորը ունեն բարձր պատասխանատվություն և ներուժ, իրականացնելու համար իրենց առջև դրված պարտականությունները, տիրապետում են իրենց մասնագիտությանը, բաց են քննարկումների և մասնագիտական վերապատրաստումներ անցնելու հնարավորություններն ընդունելու համար: Իրականացնում են ինչպես պարտադիր ուսուցման ծրագրեր, այնպես էլ աշակերտների համար տարաբնույթ միջոցառումներ, որոնք նպաստում են նրանց աշխարհայացքի բարելավմանը, արտադպրոցական կրթությանն ու դաստիարակությանը:Պարբերաբար իրականացնում են բաց դասեր:Ամենօրյա կապ պահպանում աշակերտների ծնողների հետ, քննարկումներ իրականացնելով առկա խնդիրների և հաջողությունների վերաբերյալ:

Այնուամենայնիվ առկա են որաշակի խնդիրներ, որոնք պահանջում են որոշակի ռեսուրսներ՝ ին չպես ֆինանսական այնպես էլ նյութատեխնիկական: Մասնավորապես հեռավոր համայնք լինելը խոչընդոտում է երիտասարդ կադրերով համալրելուն, մենթորության ինստիտուտը դեռևս չի գործում, ինչը մեծապես խթանում է աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, տեղեկատվական համակարգերից օգտվող ուսուցիչների թիվը փոքր է, առավել մեծ տարիքի ուսուցիչները լավ չեն տիրապետում առցանց գործիքներին:

Այս մարտահրավերները  հնարավորնս մեղմացնելու համար գործողությունների ծրագրում

նախատեսված են թիրախային միջոցառումներ, որոնք կօգնեն առավել հզորացնել մասնագետների կարողությունները՝ հաշվի առնելով առկա զարգացումները:

| ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ | |
|---|---|
| **ՈՒԺԵՂ ԿՈՂՄ** | **ԹՈՒՅԼ ԿՈՂՄ** |
| ✓ Դպրոցի մանկավարժական կազմը պարբերաբար մասնակցում է վերապատրաստումների<br>✓ Դպրոցում դասավանդում են բարձրագույն մանկավարժական կրթություն  ունեցող 9-ը ուսուցիչ<br>✓ Դպրոցի ուսուցիչները վերապատրաստումներ են անցնում ՀՀԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում<br>✓ Դպրոցի տնօրենը, փոխտնօրենը և առարկայի ուսուցիչները 2023թ մասնակցել և այս պահին էլ մասնակցում են  2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում նոր չափորոշչի վերապատրաստումներին՝ առկա և հեռավար հարթակում<br>✓ 2022թ. սեպտեմբերին ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացված տնօրենների և փոխտնօրենների վերապատրաստումներին նույնպես ակտիվ մասնակցություն է ունեցել դպրոցի  տնօրենը  և  փոխտնօրենը<br>✓ Դպրոցում իրականացվում են դասալսումներ տնօրինության, մ/մ | ✓ Կամավոր ատեստավորման մասնակցելու ուսուցիչների ցանկության  ցածր մակարդակ<br>✓ Մենթոր ուսուցիչների բացակայություն<br>✓ ՏՀՏ-ի ոչ լիարժեք տիրապետում/ բարձր տարիքի ուսուցիչների շրջանում/<br>✓ Վերապատրաստող ուսուցիչների բացակայություն<br>✓ Սակավ է ֆինանսական խրախուսման հնարավորությունները<br>✓ Առկա է ուսումնական նպատակով ֆինանսական ծախսերի պակաս<br>✓ Խրախուսման մեխանիզմները բավարար չեն նոր կադրերի ներգրավման և զարգացման համար |

| | |
|---|---|
| նախագահների կողմից, կատարվում է քննարկումներ և վերլուծություններ<br>✓ Առկա են ուսուցչական կազմի համար խրախուսման մեխանիզմներ<br>✓ Ստեղծված է բարոյահոգեբանական դրական միջավայր անձնակազմի համար՝ աշխատանքային գործառույթները պատշաճ և արդյունավետ իրականացման համար | |

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցի կառավարման կարևոր և աշխատանքների արդյունավետության բարձրացման հիմնական գործոններից մեկը անձնակազմի կարողությունների, գիտելիքների և մոտիվացիային բարձրացմանն ուղղված քաղաքականություն է:

Համայնքը լինելով սահմանամերձ և բավականին հեռու ինչպես մարզկենտրոնից այնպես էլ մայրաքաղաքից, տարաբնույթ վերապատրաստումների, հանդիպումների մասնակցության համար պահանջում են երկար ժամանակ և լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Շատ դեպքերում հաջողության հասած մանկավարժներին դպրոցը չի կարողանում ֆինանսական խրախուսանքի արժանացնել, քանի որ չունի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Մեծ խնդիր կարող է առաջացնել նաև պարտադիր ատեստավորման չանցնելը, ինչիհետևանքով կունենանք կադրերի պակաս:Խրախուսման հնարավորությունների սակավությունը պատճառ է հանդիսանում ուսուցչական անձնակազմի արտահոսքի: Մեկ այլ խնդիր է առավել հասուն տարիքի մանկավարժների տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու կարողությունների ցածր մակարդակը, ինչի հտևանքով նրանք դժվարությամբ են իրականացնում կամ մասնակցում առցանց հանդիպումների: Այս և այլ խնդիրների հետևանքով առաջանումէ մոտիվացիայի որոշակի պակաս, ինչն էլ իր հերթին բերում է աշխատանքների արդյունավետության նվազման:

Այսպիսով կարևոր նշանակություն ունի խրախուսման ինստիտուցիոնալ մեխանիզմների մշակումն ու ներդնումը, որոնք ապահովում են աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության համար նպաստավոր միջավայր: Անհրաժեշտ է զարգացնել աշխատակազմի մոտիվացիան՝ ներքին և արտաքին խթանող գործոններ, որոնք, շարժառիթ հանդիսանալով, մարդկանց մղում են իրականացնել գործողություններ, հասնելու համար նախանշված նպատակներին: Մոտիվացիան շատ կարևոր է արդյունավետ աշխատանքի համար, ներքին ցանկություն է, որը մղում է դեպի առաջ՝ դեպի նախանշած նպատակը: Անհրաժեշտ է

խրախուսել աշխատակազմին, պարբերաբար թարմացնել իրենց գիտելիքներն ու հմտությունները՝ սկսած ուսումնական ծրագրերի ձևավորումից, դասավանդման մեթոդներից, հաղորդակցման հմտություններից, տեխնոլոգիաներից և աշակերտների հետ հետադարձ կապից:

Ջլիզային Մուրադ Մուրադյանի անվան դպրոցի աշխատակազմը կարևոր արժեք է և կառավարումն իրականացվում է փոխադարձ վստահության, նախաձեռնողականության խրախուսման վրա, առկա են նպաստավոր պայմաններ անձի ինքնակրթության համար: Զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսվում են ստեղծել անհրաժեշտ հիմքեր՝ առավել ստեղծագործ և անխոչընդոտ միջավայր ներդնելու դպրոցի ուսուցչական անձնակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների ընդլայնման համար:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| Այս գործընթացի ապահովման համար դպրոցի կառավարման խորհուրդը ունի բավարար կամք և նվիրված աշխատակազմ | Որպես թույլ կողմ այստեղ կարող ենք նշել համայնքի հեռավորությունը և շատ դեպքերում մարզկենտրոն կամ մայրաքաղաք գնալ, մասնակցել տարաբնույթ վերապատրաստումների՝ պահանջում են երկար ժամանակ և լրացուցիչ ֆինանսական միջոցներ: |
| Դպրոցը համագործակցությունը այլ մարզերի դպրոցների հետ | Ֆինանսական միջոցների սակավություն |
| Համագործակցությունը առկա խորհուրդների հետ | |
| Փորձի փոխանակման մշակույթի առկայությունը | |
| **ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | |
| Անխափան ինտերնետի առկայությունը հնարավորություն կտա առավել շատ մասնակցել առցանց հարթակներում կազմակերպվող վերապատրաստումների, քննարկումների:<br>Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավում՝ համագործակցելով միջազգային և հասարակականկազմակերպությունների հետ | |

*Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներին և աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների ապահովման համար առանձնացվել են հնարավոր ռիսկերն ու դրանց նվազեցմանն ուղղված գործողությունները՝ ստորև.*

| ՌԻՍԿԵՐ | ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|

| | |
|---|---|
| • Ուսուցչական անձնակազմի արտահոսք<br>• Պարտադիր ատեստավորման չանցնելու արդյունքում կադրերի պակաս<br>• Մոտիվացիայի պակաս և աշխատանքների արդյունավետության նվազում<br>• Վերապատրաստումնե րին մասնակցելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պակաս | • Հատուկ միջոցառումների կազմակերպում՝ դասընթացներ, վերապատրաստումներ, հանդիպում-քննարկումներ<br>• Անձնակազմի համար աշխատանքային բարենպաստ մթնոլորտ և միջավայր ապահովող հանդիպումների և նախաձեռնությունների իրականացում<br>• Երկխոսության և բանավեճի մշակույթի համար նպաստավոր միջավայրի ապահովման ուղղված քննարկումների իրականացում<br>• Կառավարման խորհուրդների հետ համատեղ միջոցառումների իրականացում<br>• Գործընկեր դպրոցների և կազմակերպությունների հետ միջոցառումների և հանդիպումների իրականացում, կապերի ընդլայնում<br>• առցանց հարթակներում ներկայացնել հեռավոր մարզերում նոր կադրերի նշանակման համար պետության կողմից տրամադրվող երաշխիքները, ներկայացնել համայնքը, որպես գեղեցիկ միջավայր ապրելու և ստեղծագործելու համար:<br>• համագործակցել Երևանի մանկավարժական համալսարանի մասնաճյուղերի հետ, այցելություններ իրականացնել և հանդիպումներ կազմակերպել ավարտական կուրսի ուսանողների հետ, ներկայացնել համայնքն ու առկա հնարավորությունները նորավարտ մասնագետների համար: |

**Գծապատկեր**




## ԴՊՐՈՑԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

Կրթության ոլորտում հիմնական գերակայությունը որակի բարձրացումն է, որի նախապայմանն է ուսումնական հաստատությունների կողմից կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումն ու կարևորության գիտակցումը:

ՀՀ Լոռու մարզի Ջիլիզայի Մուրադ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցը իրականացնում է 12-ամյա տևողությամբ եռաստիճան միջնակարգ կրթության՝ տարրական, հիմնական, միջնակարգ աստիճանները: Դպրոցում կրթության բովանդակությունը սահմանված է հաստատված առարկայական ծրագրերով, կրթության չափորոշիչներով, ուսումնական պլաններով, ուսումնամեթոդական նյութերով և ուղղված է սովորողների մոտ հիմնարար գիտելիքների, հմտությունների և արժեքների ձևավորմանը

Դպրոցը՝պետության կրթական քաղաքականության սկզբունքներին համապատասխան, իր գործունեությունն իրականացնում է սովորողների զարգացման առանձնահատկություններին համապատասխան և մասնակցային սկզբունքների ապահովմամբ՝ քննարկումներ, հանդիպումներ, բաց դասեր, բանավեճեր, հայրենասիրական դաստիարակության ուղղված միջոցառումների իրականցում և այլն:

Որպես կրթության որակի ցուցանիշ՝ պետք է նշել դպրոցի աշակերտների մասնակցությունը առարկայական օլիմպիադաների /դպրոցական/, առանձին մրցույթների /ներհամայնքային/ շախմատի օլիմպիադա, ասմունքի մրցույթ:

Հաշվետու ժամանակաշրջանում դպրոցն ավարտել է երկու աշակերտ, որոնք չեն շարունակել ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում, պարգևատրվել են գովասանագրերով:

Դպրոցում հստակ սահմանված են ուսումնական գործընթացի նպատակներն ու խնդիրները՝ կիրառելով համապատասխան տեխնոլոգիաներ:

Կրթության որակի բարձրացմանն ուղղված գործընթացների շրջանակում կարևոր են և անհրաժեշտ են իրականացնել որոշակի աշխատանքներ.

- Շենքային պայմանների բարելավում.
- Ապահով և անվտանգ միջավայրի ստեղծում.
- Բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում, որոնք տիրապետում և կիրառում են ժամանակակից դասավանդման մեթոդներին.
- Կրթական պաշարների և ուսումնական գրականության հասանելիության ապահովում.

**ԴՊՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ**

**ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**



Կրթական գործընթացի ապահովումը տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ՝ ապահովում է արդյունավետ ուսումնառության կազմակերպում:
Դպրոցի աշխատակիցների կողմից դպրոցի տեղեկատվական բազայի մուտքագրումը և համակարգչայնացումը նպաստում է հաստատության գործունեության նորացմանը: Դպրոցում մատենավարությունը կատարվում է էլեկտրոնային տարբերակով: Սակայն շատ ժամանակ համակարգիչների ոչ ժամանակակից լինելը և համակարգչային դասասենյակի բացակայությունը խոչընդոտ է հանդիսանում: Հաստատությունում կրթության աշխատանքը առավել արդյունավետ դարձնելու նպատակով օգտվում ենք նկարում նշված կայքերից:

| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ |
|---|---|
| • Շենքային պայմանների ընդլայնումը<br>• ուսուցչական կազմի նվիրվածությունը իրենց աշխատանքին<br>• աշխատակազմի պատրաստակամություն<br>• նախաձեռնությունների և դրանց իրագործման համար հնարավորությունների ստեղծումը<br>• նյութատեխնիկական բազայի համալրումը<br>• որակավորման տարակարգ ունեցող, կամավոր ատեստավորման մասնակցող, ուսուցիչների թվի ավելացումը<br>• աշակերտների քանակի ավելացումը<br>• համագործակցության սահմանների ընդլայնումը<br>• ուսուցիչների համար մեթոդական աշխատանքների արդյունքներին վերաբերող նյութերը մշակելու և տպագրելու հնարավորություններ,<br>• հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար նպաստավոր միջավայրի առկայություն<br>• երիտասարդ ուսուցիչների ներգրավման հնարավորություններ, խրախուսման քաղաքականության կիրառման միջոցով | • Ֆինանսական աջակցության համար տեղանքի հեռավորությունը գրավիչ չէ գործարարների համար, որոնք կարող են ներդրումներ կատարել և փոխշահավետ համագործակցել<br>• Նոր դպրոցի կառուցման համար գումարների բացակայությունը<br>• Հեռավորությունը մարզկենտրոնից<br>• Սահմանամերձ բնակավայր լինելը խոչընդոտ է երիտասարդների՝ հեռավոր մարզում կամ համայնքում աշխատելու համար |

ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

## ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի գործունեության ամենակարևոր նպատակը սովորողների կրթության որակի բարձրացումն է, դրա համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին.մասնավորապես

- սովորողի անհատական կարիքներ (հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ պայմաններ).
- կրթության կազմակերպման գործընթաց (բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական և վարչական համակազմ).
- ուսուցման ծրագրային բովանդակություն (կրթական չափորոշիչներ, առարկայական ծրագրեր).
- կրթության կազմակերպման միջավայր (շենքային պայմաններ, ուսումնական միջավայր, կրթական պաշարներ, ուսումնական գրականություն).
- ուսումնառության գնահատված արդյունքներ
- կառավարում (կառավարման խորհուրդ, տնօրեն)

Ջիլիզայի Մուրադ Մուրադյանի անվան Դպրոցում իրականացվող կրթության որակը ընդհանուր առմամբ համապատասխանում է սահմանված կրթական չափորոշիչներին: Մասնավորապես պետական չափորոշչին համապատասխան մշակվում են դասապլաններ և իրականացվում թեմատիկ ծրագրեր: Աշակերտները պարբերաբար մասնակցում են տարբեր միջոցառումների և մրցույթների:

Այսինքն վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ սակավ հնարավորությունները, որոնք ունի դպրոցը՝ ապահովում է սահմանված պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կրթության տրամադրումը:

